

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Փետրվարի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Գլխավոր դատախազ Յուրի Չայկային և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի և ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլայ Պավլովի:

Ողջունելով պրն. Չայկայի այցը Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների միջև առկա դարավոր բարեկամությանը և երկու երկրների սերտ համագործակցությանը տարբեր ոլորտներում:

Խոսելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Ռուս Ուղղափառ Եկեղեցու սերտ կապերի մասին՝ Նորին Սրբությունը նաև շնորհավորեց պրն. Չայկային Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ի ընտրության և գահակալության առիթով:

Իր հերթին ՌԴ Գլխավոր դատախազն անդրադարձավ երկու պետությունների միջև առկա ջերմ հարաբերություններին: Նա վստահություն հայտնեց, որ երկու դատախազությունների համագործակցությունը բարի արդյունավորում կունենա ի շահ երկու ժողովուրդների:

Հանդիպմանը ներկա էին նաև Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը և Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՍՐԱՅԵԼԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իսրայելի արտակարգ և լիազոր դեսպան Շեմի Յուրին: